ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ **«15» մայիսի 2024թ.**
Ժամը՝ 12:30

Նիստի անցկացման վայրը՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1

Մասնակցում էին՝
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Դավիթ Հարությունյան - տրանսպորտի բաժնի պետ
Հանձնաժողովի անդամներ՝
Հայկ Մինասյան - տրանսպորտի բաժնի գլխավոր մեխանիկ

Պատրիկ Գնդյան - տրանսպորտի բաժնի մեխանիկ

Տիգրան Ներսիսյան - ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ
Բացակայում էր՝
Արմինե Ցականյան - տրանսպորտի բաժնի ենթակարգավար
Հանձնաժողովի քարտուղար՝
Նարինե Կիրակոսյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

1. **<u>1-5-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին</u>**

(Դ. Հարությունյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի 1-ից 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 13.05.2024 թվականինն ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. **<u>Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին</u>**

(Դ. Հարությունյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները, «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի և «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-1-ից 5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Հույս-Մոտոր» ՍՊԸ -ին:

-6-ից 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Արպանիվ» ՍՊԸ -ին:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

3. <u>Գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին</u>

(Դ. Հարությունյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունած որոշումը, ինչպես նաև օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝

-1-ից 5-րդ չափաբաժնի մասով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին,

-6-ից 8-րդ չափաբաժնի մասով «Արպանիվ» ՍՊԸ -ին:

Ընդունել որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Մինասյան

Պատրիկ Գնդյան

Տիգրան Ներսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նարինե Կիրակոսյան